

**Ռասիզմի և անհանդուրժողականության
դեմ եվրոպական հանձնաժողով**

ECRI-ի ընդհանուր քաղաքական n 5 հանձնարարական

**Պայքար մահմեդականների դեմ իրականացվող
անհանդուրժողականության և խտրականության նկատմամբ**

նդունվել է 2000 թ. մարտի 16-ին



Secretariat of ECRI
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F - 67075 STRASBOURG Cedex
Tel.: +33 (0) 3 88 41 29 64
Fax: +33 (0) 3 88 41 39 87
E-mail: combat.racism@coe.int

Այցելեք ձեր վեբ սայթը . www.ecri.coe.int

Ռասիզմի և
անհանդուրժողականության դեմ
Եվրոպական հանձնաժողովը

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի
անդամ պետությունների 1993 թ.
հոկտեմբերի 8-ից 9-ը Վիեննայում
տեղի ունեցած գազաթնաժողովում
պետությունների և
կառավարությունների ղեկավարների
ընդունած Հռչակագրին,

Հիշեցնելով, որ այդ Հռչակագրի
շրջանակներում սահմանված
ռասիզմի, օտարատյացության,
հակասեմիտիզմի և
անհանդուրժողականության դեմ
պայքարի գործողությունների
ծրագիրը կոչ է անում Նախարարների
կոմիտեին ստեղծել Ռասիզմի և
անհանդուրժողականության դեմ
Եվրոպական հանձնաժողով, որը
լիազորված լինի մասնավորապես
անդամ պետություններին ուղղված
ընդհանուր քաղաքական բնույթի
հանձնարարականներ մշակել,

Անդրադառնալով նաև 1997 թ.
հոկտեմբերի 10-ից 11-ը Եվրոպայի
խորհրդի անդամ պետությունների ու
կառավարությունների ղեկավարների
Ստրասբուրգում տեղի ունեցած
երկրորդ գազաթնաժողովի ընթացքում
ընդունված Եզրափակիչ հռչակագրին
և Գործողությունների պլանին,

Ընդգծելով, որ այդ Եզրափակիչ
հռչակագիրը հաստատում է
Եվրոպայի խորհրդի անդամ
պետությունների՝ ավելի ազատ,
հանդուրժողական և արդարացի
Եվրոպական հասարակություն
ստեղծելու նպատակը, միաժամանակ
կոչ անելով ուժեղացնել պայքարը
ռասիզմի, օտարատյացության,

հակասեմիտիզմի և
անհանդուրժողականության դեմ,

Հիշեցնելով, որ Մարդու իրավունքների
Եվրոպական հռչակագրի 9-րդ
հոդվածը պաշտպանում է մտքի, խղճի
և կրոնի ազատությունը,

Անդրադառնալով նաև Մարդու
իրավունքների Եվրոպական
կոնվենցիայի 14-րդ հոդվածում
պարունակվող խտրականության
արգելման սկզբունքին,

Հաշվի առնելով 1991 թ. սեպտեմբերի
19-ին Խորհրդարանական
վեհաժողովի կողմից ընդունված N
1162 հանձնարարականի դրույթները՝
Եվրոպական մշակույթին իսլամական
քաղաքակրթության բերած ավանդի
վերաբերյալ,

Ի գիտություն ընդունելով 1998 թ.
նոյեմբերի 24-ից 26-ը Ստրասբուրգում
Միգրացիայի Եվրոպական կոմիտեի
կողմից կազմակերպված կրոնի և
ներգաղթյալների ինտեգրմանը
նվիրված սեմինարի
Եզրակացությունները,

Ընդգծելով, որ Եվրոպայի խորհրդի
անդամ պետություններում
պետության և կրոնի միջև
փոխհարաբերությունները
կարգավորող ինստիտուցիոնալ
կառույցները շատ բազմազան են,

Համոզված, որ կրոնների խաղաղ
գոյակցությունը բազմակարծիք
հասարակության մեջ հիմնված է
ժողովրդավարական պետությունում
կրոնների միջև հավասարության
պահպանման և խտրականության
արգելման վրա՝ պետական օրենքների
և կրոնական պատվիրանների հստակ
տարանջատմամբ,

Հիշեցնելով, որ հուղայականությունը, քրիստոնեությունը և իսլամը դարեր շարունակ փոխազդեցության մեջ են եղել և ազդեցություն են գործել եվրոպական քաղաքակրթության վրա, անդրադառնալով նաև այն դրական ավանդին, որ իսլամը բերում է եվրոպական հասարակություններին, որոնց բաղկացուցիչ մասն է այն կազմում,

Անհանգստացած իսլամի և մահմեդական համայնքների նկատմամբ աճող անհանդուրժողականության որոշ նշաններից այն երկրներում, որտեղ իսլամը բնակչության մեծամասնության կրոնը չէ,

Անկեղծ ափսոսանք հայտնելով, որ երբեմն իսլամի մասին խեղաթյուրված պատկերացումներ են տարածվում, որոնք հիմնված լինելով թշնամական ստերեոտիպերի վրա, նպատակ ունեն այս կրոնը որպես սպառնալիք ներկայացնել,

Մերժելով իսլամի վերաբերյալ ցանկացած դետերմինիստական պատկերացում և ընդունելով այս կրոնի ներքին մեծ բազմազանությունը, որ բնորոշում է այն իր կիրառության մեջ,

հանձնարարում է այն անդամ պետությունների կառավարություններին, որտեղ մահմեդական համայնքներ կան, որոնք փոքրամասնության վիճակում ապրում են իրենց երկրում.

- հավաստիանալ, որ մահմեդական համայնքները խտրականության չեն ենթարկվում՝ իրենց կրոնը կազմակերպելու և նրան դավանելու հարցերում,
- տվյալ պետության առանձնահատկություններից ելնելով, համապատասխան ձևով պատժել կրոնական բնույթի խտրականության դրսևորումները,

Խորապես համոզված, որ անհրաժեշտ է պայքարել այն նախապաշարումների դեմ, որից տուժում են մահմեդական համայնքները և ընդգծելով, որ այդ նախապաշարումները կարող են դրսևորվել տարբեր մակարդակներում, մասնավորապես ընդհանուր առմամբ բացասական վերաբերմունքով, բայց նաև տարբեր աստիճանի խտրականությամբ, ինչպես նաև բռնությամբ և հետապնդումներով,

Հիշեցնելով, որ չնայած անհանդուրժողականության վերոհիշյալ դրսևորումներին, այսօրվա Եվրոպայի ամենաբնորոշ գծերից մեկը բազմակարծիք հասարակություններում դավանանքների բազմազանության ընդգծումն է,

Մերժելով կրոնական ծայրահեղականության ցանկացած դրսևորում,

Ընդգծելով, որ բազմակրոն և բազմամշակույթ հասարակության սկզբունքը անքակտելիորեն կապված է կրոնների՝ իրենց հասարակությունների ներսում գոյակցելու ցանկությանը,

- անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել կրոնական ծեսերին ազատորեն հետևելու լիակատար երաշխիքներ ապահովելու նպատակով, այս առումով հատուկ ուշադրություն դարձնելով, որպեսզի վերացվեն օրենքով սահմանված կամ վարչական արգելքները, որոնք զուր կերպով խոչընդոտում են թե իսլամական կրոնի իրականացման համար անհրաժեշտ քանակով պաշտամունքի վայրերի կառուցմանը և թե նրա հուղարկավորության ծեսերի բնականոն ընթացքին,
- հավաստիանալ, որ պետական մարմինները ուշադիր են և իրենց ամենօրյա աշխատանքում հաշվի են առնում հասարակության բազմակրոն բնույթից բխող մշակութային և այլ պահանջմունքները,
- վերահսկել, թե արդյոք գոյություն ունեն դավանանքի վրա հիմնված խտրականության դեպքեր՝ քաղաքացիություն ընդունելու հարցում և հարկ եղած դեպքում միջոցներ ձեռք առնել՝ դրանց վերջ դնելու համար,
- անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել՝ կրոնական դավանանքի հիման վրա կրթության ոլորտում խտրականության ցանկացած դրսևորման դեմ,
- անհրաժեշտության դեպքում օրենսդրական միջոցներ ձեռք առնել՝ կրոնական դավանանքի հիման վրա աշխատանքի տեղավորման և աշխատանքային կյանքում խտրականության դեմ պայքարելու համար,
- խրախուսել գործատուներին մշակելու և ընդունելու »օրինակելի վարքի կանոններ«՝ կրոնական դավանանքի հիման վրա աշխատանքի տեղավորման և աշխատանքային կյանքում խտրականության դեմ պայքարելու համար, ինչպես նաև, հարկ եղած դեպքում կազմակերպել տվյալ հասարակության բազմազանությունը ներկայացնող աշխատավայրեր,
- ուսումնասիրել, թե արդյոք մահմեդական համայնքի անդամները չեն ենթարկվում խտրականության՝ հասարակությունից դուրս մղվելու ձևով և հարկ եղած դեպքում ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցներն այդ երևույթների դեմ պայքարելու համար,
- հատուկ ուշադրություն դարձնել մահմեդական կանանց վիճակին, քանի որ նրանք կարող են ենթարկվել և ընդհանրապես կանանց դեմ ուղղված, և մահմեդականների դեմ խտրականությունից,
- հետևել, որ դպրոցական և բարձրագույն ուսումնական ծրագրերը, մասնավորապես պատմության դասավանդման բնագավառում, խեղաթյուրված ձևով չներկայացնեն կրոնների և մշակույթների պատմությունը և իսլամի նկատմամբ իրենց մոտեցումները չհիմնեն թշնամանքի և սպառնալիքի ընկալման վրա,
- հետևել, որ դպրոցում կրոնների դասավանդումը հիմնված լինի մշակութային բազմազանության հարգանքի վրա և այդ նպատակով ապահովել դասավանդողների պատրաստումը,

- կարծիքներ փոխանակել տեղական մահմեդական համայնքների հետ՝ պարզելու համար, թե ինչ միջոցներով է հնարավոր դյուրացնել նրանց համար այնպիսի հոգևոր սպասավորների ընտրությունը և ուսուցումը, որոնք ծանոթ լինեն այն հասարակությանը, որի մեջ պետք է աշխատեն և հնարավորության դեպքում որոշակի փորձ ունենան,
- խրախուսել տեղական և համապետական մասշտաբներով կամավոր երկխոսությունները՝ բնակչության ուշադրությունը բևեռելու համար այն հարցերի վրա, որոնք կարոտ են առանձնակի ուշադրության՝ սոցիալական և մշակութային բախումներից խուսափելու նպատակով,
- խրախուսել քննարկումներն այն մասնագիտությունների ոլորտում, որոնք կապված են հաղորդակցության հետ, մասնավորապես լրատվամիջոցների և գովազդի բնագավառներում՝ վերջիններիս կողմից իսլամի և մահմեդական համայնքների արտացոլման առնչությամբ, հիշեցնելով ոլորտների մասնագետների պատասխանատվությունը՝ նախապաշարումների և կանխակալ կարծիքների վրա հիմնված տեղեկատվություն չտարածելու վերաբերյալ,
- ապահովել մահմեդականների նկատմամբ անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքարի նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետության գնահատումն ու մոնիտորինգը :

